ՍՓԻՒՌՔԱՀԱՑ ԳՐՈՂ ԱՆԵԼԸ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԵՑ ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ ՄԵԴԱԼՈՎ

ՀՀ Նախագահ Ռ. Քոչարեանի Մարտի 31-ի հրամանագրով սփիւռքահայ բանաստեղծ եւ վիպասան Անելը (Կարօ Կարապետեան) վաթսունամեայ գրական ակնառու ծառայութիւնների համար պարգեւատրուել է Մովսէս Խորենացի մեդալով:

Այդ պատուաւոր պարգեւը Մայիսի 7-ին Փարիզում գրողին յանձնեց ՀՀ դեսպան Էդ. Նալբանդեանը:

Անելը ծնուել է Երուսաղէմում, յաճախել է տեղի Սրբոց Թարգմանչաց Ազգային վարժարանը, այնուհետեւ՝ Ֆրանսիական կոլեջը: 1944 թ. մեկնել է Լիբանան ուսանելու Բեյրութի ֆրանսիական բժշկական համալսարանում: Սրտաբան բժշկի իր մասնագիտութիւնը կատարելագործել է Բոստոնի Հարվարդի համալսարանում, դառնալով յայտնի մասնագէտ եւ հետագայում դասախօսելով այնտեղ: Որպէս բժիշկ երկար տարիներ աշխատել է Երուսաղէմում եւ Միացեալ Նահանգների տարբեր քաղաքներում:

Անելը սկսել է գրել վաղ հասակից: 1945 թ. լոյս է տեսել նրա բանաստեղծութիւնների առաջին ժողովածուն՝ «Մութ Ցաւեր» վերնագրով, 1949-ին՝ «Տեսիլք Գինովի», եւ 1955-ին՝ «Պարը Ցոյսին» հատորները: Բանաստեղծութիւններից զատ նա գրել է նաեւ արձակ գործեր՝ 1975-ին հրատարակուած «Որդի Մարդոյ» վէպը եւ այլք:

Անելի գրական գործերը տպագրուել են սփիւռքի բազմաթիւ պարբերականներում: Բանաստեղծութիւնների եւ վէպերի մի քանի ժողովածուներ սպասում են հրատարակման:

Երկարամեայ գրական բեղուն գործունէութեան համար Անելը արժանացել է «Սուրբ Ցակոբ» շքանշանի (1968 թ. Երուսաղէմ), «Սուրբ Ներսէս Շնորհալի» եւ «Սուրբ Սահակ-Մեսրոպ» շքանշանների (1985 եւ 1992 թթ. Էջմիածին), «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ» Ա. կարգի շքանշանի (1997 թ. Էջմիածին), «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանի (1998 թ. Անթիլիաս): 1998 թ. անդամակցում է Հայաստանի Գրողների միութեանը:

Հայաստանի Հանրապետութեան
դեսպանութիւն
Փարիզ

digitised by A.R.A.R.@